

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն կամպոզիտոր մէջ:

Ստորագրողները, իմանալով, որ արդարեւ

Կապույտ. Редакция «Мелк»

Կապույտները ըստ է առաջին 10—2 ժամ

(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարութիւնները ըստ է առաջին 2 կոպէկով:

Հայտարարութիւնները, իմանալով, որ արդարեւ

Կապույտ. Редакция «Мелк»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄԵԼԿ

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐԸ

ԵԿՈՂ 1882 ԹԻՒՆ

(Տ Ա Ս Ն Ե Ւ Մ Է Կ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Կը հրատարակէ Նոյն դրերով և Նոյն պրոգրամայով:
ՊՐՕԳՐԱՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II. Առաջնորդող յօդուածներ, III. Ներքին տեսութիւն, IV. Արտաքին տեսութիւն, V. Խառն լուրեր, VI. Հեռագիրներ, VII. Ֆելիետոն կամ Բանասիրական, VIII. Յայտարարութիւններ:
ԼՐԱԳՐԻ ՏԱՐԵԿԱՆ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐԸ, 10 րուբլ է, կէս տարեկան 6 ր., իւրաքանչիւ ամսին 1 րուբլ: Հատուկ համարները 5 կոպէկով:
Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւալ հասցեով. Тифлисть, редакция «Мелк».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին տեսութիւններ, քաղաքականութիւն: Գերմանիա: Ֆրանսիա: Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 17 նոյեմբերի

Փոքր ինչ ժամանակ սրանից առաջ ինչ պատահեց Գանձակ գետով և մի քանի անձանց հետ խօսել փարիզի Հայկազեան-Ուսումնասիրաց ընկերութեան մասին: Այդ պարոններից ոմանք մեծ համարմունք ցոյց տուին վերոյիշեալ ընկերութեան նպատակին և ըստ իրենց յայտնեցին մասնակցել նրան. ուստի պարտք եմ համարում պատուական թերթիդ միջոցաւ յայտնել թէ այդ պարոնների ազգանունները և թէ նրանց տուած գումարը ի գիտութիւն մերայնոց: Նրանք են. պ. Ներսէս Տէր-Ներսէսեան չորս տարեկան վճարք 30 ր., պ. Ալեքսանդր Իսահակեան մի տարեկան վճարք 7 ր. 50 կ., պ. Մարտիրոս Նաբաթեան մի տարեկան վճարք 7 ր. 50 ր., և պ. Նիկողայոս Մէլիքեան միտուածք նուէր 10 ր.: Ընդամենը ստացած եմ 55 ր., որը և անմիջապէս յանձնած եմ պ. Եփրէմ Մատուցեանին, որը փարիզի ընկերութեան գործակատար է Թիֆլիսում:

Յուսալով, որ չէք մերժի խնամք խնդիրքս տեղի տալ ազգագրութեան (Մշակիդ) մէջ այս երկտողին՝ նախապէս կը մատուցանեմ ձեզ, պ. Խմբագիր, իմ խորին շնորհակալութիւնը:

ԲԺ. Կ. Մէլիք-Բէգլարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Кавказ» լրագիրը հաղորդում է հետեւեալը: Միջազգային հեռագրական ընկերութիւնից ստացված և մեր լրագրի մէջ տպված հեռագրի առթիւ, մեզ հաստատ աղբիւրներից յայտնի է, որ, աչքի առաջ ունենալով Բաթումի նահանգի հարկան թիւրքաց սահմաններում ժամտախտի նշաններ ունեցող մի ինչ որ հիւանդութեան մասին տարածված անհանգստացող լուրերը, Բաթումի նահանգի գլխաւորը միջոցներ է գործ դրել, նահանգի ցամաքային սահմանի վրա ամեն տեսակ հաղորդակցութիւնը փակելով, և մի և նոյն ժամանակ քրտն-վախտի իրաւունքներով մէկ չկունային հրամայված է Թիւրքիայից դէպի

մեր ափերը եկող նաւերի մանրամասն խուզարկութիւն անել: Ինչպէս հաղորդում է Տրապիզոնի ուսումնաց հիւպատոսը մարտի 14-ից, Տրապիզոնի գլխաւոր նահանգապետը (վալի) հաստատում է, որ Լազիստանում տարածված հիւանդութիւնը չափազանց ցածր է և բոլորովին փոխադրական չէ, իսկ էրզրումի ուսումնաց հիւպատոսը նոյեմբերի 15-ից հեռագրում է, որ էրզրումի բոլոր բժշկական շրջաններում հասարակական առողջութիւնը կատարելապէս բաւական նացուցիչ է, և որ տեղական վալին Միջազգային ընկերութեան վերոյիշեալ հեռագրի առթիւ հեռագրական կարգադրութիւն արաւ ստուգելու Միջազգային ընկերութեան այդ տեղեկութիւնը, որի մասին անպաշտ կը հաղորդվի Կովկասեան բարձր կառավարութեանը: Վերջինս, բացի դէպքերից, արդէն յարաբերութիւններ է սկսել Կ. Պոլսի մեր դեսպանի, Նոյիփօփի հետ, Թիւրքիայի մեր հարկան նահանգների մէջ տարածված հիւանդութեան բնաւորութիւնը վերջնականապէս պարզելու համար:

«Մշակի» ներկայ համարում տպւում ենք բժիշկ Մէլիք-Բէգլարեանից նամակը փարիզի Հայկազեան ընկերութեան համար հաւաքած փողերի մասին: Այդ նամակը տպւում մենք բացառութիւն ենք անում մեր բարեկամ բժիշկ Մէլիք-Բէգլարեանից համար, եթէ ոչ մենք երբեք չենք տպւում այն ցուցակները նուիրատու անձանց, որոնք մեր խմբագրութեանը չեն յանձնում փողերը, որովհետեւ այսպիսով մեր լրագրի էջերի մէջ նուիրատուների ցուցակների պատճառով այլ ևս տեղ չէր լինի ուրիշ որ և է յօդուածների համար:

Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՍԻՑ մեզ գրում են: «Նոր ընտրված տանուտէր պ. Գեղամիսնցը սկզբում մեծ մեծ խոստովանելով չլացրեց ժողովրդին, մինչև իր տեղը ստացաւ: Նա խոստացաւ փողոցները մաքուր պահել, գիշերները լուսաւորել և ուրիշ շատ բաներ: Լուսաւորութեան համար լապտերներ տնկվեցան, բայց ոչ ոք նրանց մէջ լոյս չէ տեսել: Յերոտ փողոցներում անկարելի է ման գալ, մասնաւոր դաշտարանի վրա լճացած ջրի մէջ նաւակներ կարելի է ման ածել: Հացագործները այնքան անախտանցիկ են հացը, որ անկարելի է ուտել, չը նայելով որ ցորենը այժմ շատ էժան է:»

Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՍԻՑ գրում են մեզ: «Հեմարանի վարժապետ պ. բժիշկ Տէր-Գրիգորեանցը միշտ թնօղվելով է մտնում դասատու, յայտնի չէ թէ ինչ նպատակով: Փանի մի անգամ բժշկին նկատել են այդ տարօրինակ վարմունքի մասին այն ևս պ. Բեկտորի ներկայութեամբ, իսկ վեր-

ջինս, զուարճութեան տալով, անց է կացրել անկարգութիւնը:»

Վ. Ա.ԳՈՒԼԻՍԻՑ գրում են մեզ: «Արդէն երբորք անգամ է, որ բարձր հողերը կառավարութիւնը հրամանագրել է տեղալին պ. Գանձակեան, որ տէր Մովսէս քահանային Ազուլիսից հեռացնէ, բայց պ. Գանձակեանը ուշադրութիւն չէ դարձնում և չէ դորժադրում հրամանը: Ի հարկէ, պարոնը իր առանձին նպատակներն ունի, բայց մինչև երբ պէտք է դէպի չարք գործ դնել ժողովրդի համբերութիւնը:»

Մեզ գրում են Վ. Ա.ԳՈՒԼԻՍԻՑ: «Հոկտեմբերի 22-ին կատարվեցաւ տեղալին օրերուց զբաւրցի 14 տարեկան տարեգործը. ժողովուրդը լինէր դաշնաւոր, այնպէս որ կանգնելու տեղ չը կար: Օրերուց երկին նոյնպէս այնտեղ էին կանգնեցրած, թէն նրանց համար առանձին տեղ էր որոշված: Հանդէսը չբեղ էր, բայց անկարգ: Հոգաբարձուները, ինչպէս միշտ սովորութիւն ունեն, այս անգամ ևս հաշիւ չը ներկայացրին հասարակութեանը: Երևանի պ. Նահանգապետը այդ օրը շնորհ բերեց դպրոցը և դո՛ւ մնաց դպրոցից:»

Լրագրիւններում կարդում ենք որ Վ.Օլգա գետը ԱՍՏՐԱԽԱՆԻ մօտ, Նոյեմբերի 10-ին ծածկվել է սառույցով: Շողանաւերի երթեկութիւնը դադարեցրած է:

«МОСКОВСК. ВѢД.» լրագիրը հրատարակեց մի երկար առաջնորդող յօդուած, որի մէջ դարմացմամբ կարգադրեց հետեւեալ մտքերը: Լրագիրը ասում է որ Ռուսաստանի պէս մի ահագին պետութիւն չէ կարելի կառավարել կենտրոնից առանց տեղ ուղարկելով պաշտօնականներին: Բայց ինչպէս պէտք է կառավարել—այդ որոշ կերպով չէ ասում Մովսէլայի թերթը: Մի և նոյն յօդուածում պ. Կատովի լրագիրը ասում է որ պէտք է ապահովանել ուսումնասիրութեան հասարակային և անհատական ազատութիւնը: Այս կէտն էլ թերթը չէ պարզում:

Թիֆլիսում հրատարակող «Юридическое Общество» շաբաթագրի մէջ կարդում ենք որ անձնապաշտ օրերով Սօֆիա Շատկովսկու հայրը, որ ծառայութենից հրաժարական տուած մայր է, փաստաբան Նախուլովի ձեռքով գանձաւոր է ներկայացրել դատարանին այն երկտասարդի դէմ, որ դաշնակցեցրեց իր աշխկան և պատճառ դարձաւ նրա անձնապաշտութեան:

Մեր թղթակիցը Հաւաքար թաղից մեզ գրում է հետեւեալը: «Հատ անգամ դարձրել ենք քաղաքային վարչութեան ուշադրութիւնը Հաւաքարի փողոցների անմիջապէս դրութեան վրա: Այդ փողոցները քարած չեն, չեն մաքրվում և բացի այդ այնպէս փոսեր ունեն, որ կառքերը անդադար չունեն գալիս ու ընկնում փոսերի մէջ: Ամենափոքր անձրիից անտանելի ցելա է դառնում, որ շատ է դժուարացնում մանուկներին դպրոց երթալը: «Մշակի» այդ լուրերը ունեցան իրանց ներգործութիւնը. քաղաքային վարչութիւնը կարգադրել է այժմ հարկել Հաւաքարի բոլոր քուէները և խնդիր դարձնել նրանց: Բանւորները արդէն աշխատում են: Յիշատի, 57,000 րուբլ գումարը որ նշանակված է Թիֆլիսի փողոցների մաքրութեան և վերանորոգութեան համար, մի այնպիսի մեծ գումար է, որով կարելի է Թիֆլիսի բոլոր փողոցները հնազանդել բարեկարգել, եթէ աչքի առաջ ունենանք և այն նախաձեռնութիւնը, որ քուէների վրա գործ դրվող լոճը, քարերը և աւաղը բոլորն էլ ձրի է ստանում քաղաքը: Պէտք է այն էլ ասել որ շատ անգամ կապալառուները ի չարն են գործ դնում իրանց իրաւունքները, կանոնաւոր կերպով չը

կատարելով իրանց յանձն առած պարտաւորութիւնները:»

ՄՕՍԿՎԱՅԻՑ մեզ գրում է Լազարեան ճեմարանի ուսանողներից մէկը: «Վնթերցողներին յայտնի է որ այստեղ կազմված է մի մասնագործող որ պէտք է պատրաստէ ճեմարանի համար հայոց լեզուի և հայոց պատմութեան ծրագիր, բայց զարմանալի է որ այս անգամ էլ դարձեալ մոռացութեան են տալիս Հայաստանի աշխարհագրութիւնը, որ իսկապէս ամենագլխաւոր առարկաներից մէկը պէտք է լինէր ճեմարանում:»

Թիւրքաց Հայաստանից եկողները մեզ պատմում են որ Գիւրբեքլիի վիլայէթի հայերը շատ թշուառ վիճակի մէջ են շնորհով տեղական վալին բռնութեան և մոլեռանդութեան: Նա ամեն կերպ ճնշում և հարստանարում է հայ տարրը:

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են: «Այստեղի գլխաւոր մթերքները բաւական էժան են. հացի ֆունտը առաջին տեսակի արժէ 3 կոպէկ, երկրորդ տեսակի 2 կոպէկ, բրինձը ֆունտը 6 կոպէկ, պանիրը 7 կոպէկ:»

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են: «Վերջապէս կաշու գործարանը, որ գտնվում էր քաղաքի կենտրոնում և իր գարշելի հոտով ապականում էր ամբողջ քաղաքի օդը, հեռացրած է քաղաքից, վարչութեան կարգադրութեամբ: Բայց լսում ենք որ գործարանի տէրերը բողոքով դիմել են բարձր իշխանութեանը այդ կարգադրութեան պատճառով: Յոյս ունենք որ իշխանութիւնը, ի նկատի առնելով քաղաքի առողջապահական կողմը կը մերժէ այդ բողոքը:»

Վարդաշէն գիւղից մեզ հաղորդում են որ այդ տեղի լուսաւորչական և յունաբան ուսումնարանների մէջ դարձեալ ծագել է երկպառակութիւն: Բայց այս անգամ յոյս կայ որ երկպառակութիւնը շուտ կը վերջանայ և վստահեմ եմ ինչ որ ինչ ունենայ, որովհետեւ լուսակցութիւններից ոչ միւն չունի պարագլուխներ:

Պ. Լալայեան խնդրում է մեզ յայտնել որ վաղուց արդէն մամուլի տակ է և շատ չուտով լոյս կը տեսնի Ժօրթ-Սանդի Վարդագոյն ամպ մանկական վէպը:

Վ. Ա.ԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են: Արդէն ինչ ամիս անցնում է, բայց տակաւին ոչ մի անգամ երեսփոխանական ժողով չէ կապցել մեր դպրոցները դրութիւնը քննելու համար: Ասում են, որ դրա պատճառը հոգաբարձութիւնն է, որ չէ կամենում ենթարկվել ոչ ոքի կօնտրոլի, այլ ցանկանում է ինքնակամ գործել:

Մեզ գրում են Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՍԻՑ, որ գիւղական երկսեռ դպրոցները բաւական յառաջադիմութիւն են գործում. հոգաբարձուները և վարժապետները բարեխղճութեամբ են կատարում իրանց պարտաւորութիւնները: Ճեմարանի լսարանի աշակերտները այդ դպրոցներում տալիս են փորձնական դասեր:

Վ. Ա.ԳՈՒԼԻՍԻՑ պ. Ալեքսանդր Տէր Մելիքեան խնդրում է մեզ յայտնել, որ նա արդէն թարգմանում է Իոլիա Գուրօ-Հապիսկի մալե-չիւկա կոչված աշխատութիւնը, և ինքը դիտաւորութիւն ունի տպագրել տալու, այնպէս որ ուրիշները ձեռնամուխ չը լինեն մի և նոյն զբաղի թարգմանութեանը:

թեմաք: Հպատակելով ժողովրդական կամ-
քին, մենք պատրաստ ենք նոր քայլեր անել
առաջագործական ծանապարհի վրա, որ
բայց է ֆրանսիական ժողովրդի առաջ: Այդ
նախագիծը պատգամաւորներին ժողովը ըն-
դունեց երկար ծափահարութիւններով:

Գամբետտայի նախագիծը առանձին տպա-
ւորութիւն չը գործեց հասարակական
կարծիքի վրա: Մամուլը մեծ մասամբ յար-
ձակվում է նրա վրա և շատ քիչ լրագրե-
րներ գովում են նրան: Լրագրիւնները շատերը
պատրաստականութիւն են յայտնում ներու-
ղամտութեամբ վերաբերվել նոր կառավա-
րութեան խոստովանելին և սպասել նրա
գրական գործերին: „Temps“, „Journal
des Débats“ և „Siècle“ չափաւոր լրա-
գրիւնները ցաւակցութիւն են յայտնում, որ
Գամբետտա չը կարողացաւ համաձայնել
հեղինակութիւն ունեցող այնպիսի մարդ-
կերանց հետ, ինչպէս Ֆրէյսինէ և Լէօն
Սէ, և բաւականացաւ երկրորդական ան-
ձինքներով, որոնք առաջ „République
Française“ լրագրի խմբագրութիւնն էին
կազմում: Մինչև անգամ այժմեան ծովա-
յին մինիստր Գուսթար մի ժամանակ այդ
լրագրի աշխատակից է եղել: Գամբետտան
առհասարակ ընտրեց երկրաստորդ և ան-
յայտ գործակիցներ, ուշադրութիւն չը
դարձնելով նրանց վրա, որոնք զբաղված են
իրանց անուան փայլով: Իսկպէս կառա-
վարութեան գլխաւոր գործիչը և ճառա-
խօսը Գամբետտա կը լինի, իսկ մնացած
մինիստրները նրա կողմնակիցները և նրա
կամքի հշու հպատակներն են: Հետևապէս
նոր մինիստրութիւնն էլ նոյնքան հաստատ
և տեղական կը լինի, որքան հաստատ և
տեղական է Գամբետտայի անձնական ազ-
դեցութիւնը: Ուրիշ բան կը լինէր, եթէ
Գամբետտա ստիպված լինէր գործել այն-
պիսի մարդկերանց հետ, որոնք սովոր են
անկախ քաղաքականութեանը: Այն ժա-
մանակ անհամաձայնութիւններ կը պատա-
հէին և էրեւելի մինիստրութիւնը՝ ինքն
ըստ ինքեան կոչւնաւոր:

Գամբետտա դիտմամբ չը հրաւիրեց Ֆր-
էյսինէին և Լէօն Սէին: Նա կամենում էր
ազատ լինել և հիմնով իր հեղինակու-
թեան և իր կողմնակիցների տաղանդի և
աշխատասիրութեան վրա: Իսկպէս երկրին
բոլորովին հարկաւոր չէ անպատճառ ծեր
և յայտնի մարդկերանցից կառավարվել, ո-
րոնք ապրում են մի անգամ իրանց ձեռք
բերած հեղինակութեան օգնութեամբ:

ՆԱՄՍԱ ԹԻԻԲԻՍԻԱՅԻՑ

Կ. Պոլիս, 10 նոյեմբերի

Կ. Պոլիս գալիցս յետ, առաջի անգամ եմ
այնպիսի ջերմ փափագով ձեռնարկում ձեզ գրե-
լու նամակին, ինչպէս այս անգամ, առաջին
անգամ է պատահում ինձ կանգնած լինել այն-
պիսի քաղաք պարտաւորութեան առաջ, ինչպէս
այժմ, երբ թաղման եմ կանգնում Հայաստանի
ամենամանավակ ներկայացուցիչների: Կ. Պոլիս
բնակիչներին կողմից ուստաւայ գրազնանքի
առաջ: Մէկ շաբաթ է, որ բնակարանս յետ
դառնալու ժամանակ, միջնադէմից բաւական ուշ,
ինձ ասում են թէ մի խումբ հայ համալսելիք
ղզնիս առաջ կանգնած, ինձ են ուզել տեսնե-
լու: Կարծելով դոցա այն սովորական պան-
դուխտներին, որոնք դիմում են իրանց մի գործ
ձարելու համար բարեխոս լինելու խնդրելով,
շատ էլ ուշադիր չեղայ այդպիսիներին գալուն
գնալուն: Վերջապէս այսօր երեկոյ հանդիպեցի
նոցա հետ երես առ երես և ամբողջ մի քանի
ժամ խօսելուց յետ, ահա շտապում եմ հայտը-
ղել ձեզ ինչ լսեցի և զգացի:

Եկողները Սեբաստիայի վիլայէթի հայաբնակ
խոռանդիլի գիւղիցն էին, որը այդ վիլայէթի
մէջ նոյն քաղաքական անունն է վայելում, ինչ

Գալալու գիւղը երկանի նահանգում և Ջրաբեր-
դը Ղարաբաղի մէջ: Այդ գիւղի բնակիչները
այնչափ անուանի են իրանց կարգութեամբ չըը-
ջապատող Աշրեթ Ղօշքիւր ասվող քիւրդ
ցեղի մէջ, որ մեծամեծ բէյերը կը գան հեռու
տեղերից դոցա մօտ քաւորութիւն (կնքա-
ւորութիւն) հաստատելու համար: Բայց նշանա-
ւոր երեւոյթը այն է, որ օտար ցեղերի հետ այդ-
պիսի սերտ յարաբերութիւններ վարելով, փո-
խանակ ընդհանուր հայկական ակնածութեան
օտարների առաջ, այնպիսի խորտակ և տիրապե-
տական կողմից են ցոյց տուած իրանց, որ քիւրդ
բէյերը ենթարկվելով նոցա ազդեցութեան, շատ
անգամ ամբողջ ամբողջով իրանց ընտանիքը
որդիքը հիւր են բերում խոռանդիլից մօտ
էրմէնի թերթիէ (հայկական աղաւթաբոր-
յութիւն) սովորելու համար:

— «Բանի հոգի խոռանդիլիցի կաթ Կ. Պոլիս»
հարցրի:— «Մօտ հարկը մարդ» ասեցին:— «Եւ
այսպիսի գեղեցիկ աղամարդիկ բնածնակութեան
արժան մարդիկ էք, որ այդպիսի պարագային
ներքի մէջ կը մաշէք ձեր կեանքը» նկատեցի
տոհմութեամբ:— «Իրաւունք ունէք, էֆէնդի,
բայց ինչ անեք, որ մեր երկրում մի բան չը
դիտենք, որ նրանով կարողանանք աշխատել
այնչափ, որչափ Կ. Պոլիս բնածնակութեամբ»
պատասխանեց հինգ մարդից մի երիտասարդը,
որը եթէ պատահմամբ Պետերբուրգի նահանգի
Պրեօբրաժնիսկի գուղի ալ թխապահներէ մինը
կը լինէր:— «Ե՛, ինչ կուզէք»:— «Մենք եկել ենք
ձեզ մօտ մի խնդրելով, բայց աֆ (ներողու-
թիւն) կանէք, մենք կուզենք, որ դուք մեզ օգ-
նէք մի քանի գրքերով, եթէ ունէք ձեզ մօտ
նոցանից աւելորդները:— «Ի՞նչ կանէք գրքերը»
հարցրի, կարծելով թէ իրանց ընկերացանու-
թեան համար էր այդ, բայց ու բաւականութեամբ
յայտնվեց, որ այդ մարդիկ ամենատաժան
կանէք վարելով ներկայիս մայրաքաղաքի մէջ,
այնչափ հետամուտ են իրանց հայրենիքի դար-
գաման, որ ձեռնարկած են մի տեսակ միսիօնե-
րական գործի: Օգուտ քաղելով նորանից, որ
վերոյիշեալ բաղմամբ քիւրդ ցեղը օրէց օր
աւելի մեծ հակում է ցոյց տալիս խոռանդիլ-
ցոյց և նոցա դրացի հայերի հետ խառնվելու
համար, կորիչ գիւղացիք շտապել են կազմել
իրանք իրանց մէջ Լուսաւորչի անունով
մի ընկերութիւն, որի նպատակն է մի կողմից
քիւրդաբնակ գիւղերի մէջ բերանացի քարոզու-
թիւն անել, միւս կողմից էլ շարժական ուսում-
նարաններ պահել քիւրդ թաղանթների մէջ:—
«Ձեզ ո՞վ սովորացրեց այդ բանը» հարցրի զա-
մայմամբ, առաջի անգամ լսած լինելով մի այս-
պիսի երևոյթի մասին հայ հասարակ ժողովրդի
մէջ:— «Ո՞վ պէտք է մեզ սովորացնէ» նկատեց
նոյն պարթևանձ երիտասարդը, կարծես վերա-
ւորվելով իմ հարցից:— «Ո՞չ, ես նորա համար եմ
հարցնում, ասեցի, որ այդպիսի մի բան այնչափ
ժամանակ ոչ ոքից չեմ լսած»: Սուրբ վրա հետա-
քրքրի պատգամաւորութեանը մէկը միւսին ընդ-
հատելով սկսեց այնպիսի դատախազութեան անել
ինձ իրանց ազգային պարտաճանաչութեան հա-
մար, որ էլ ուրիշ ուրախութիւն չը լինի, եթէ
այդպիսի մարդիկ պատահէր տեսնել Կ. Պոլիսում
Հիւզօյի լոյսի» անունով խօսողներին մէջ ան-
գամ:— «Լա՛ւ, ինչ տեսակ դրքեր են ձեզ հարկա-
ւոր և ինչպէս պիտի օգուտ քաղէք նոցանից»:—
«Ինչ տեսակ կուզէք տուէք, միայն թէ հայե-
րէն գրքեր լինեն, որ քիւրդերի մէջ կարգալով,
թարգմանենք նորանց որ հայն էլ ազգ է, հա-
յերն էլ տէր ունեն աշխարհիս մեծ մեծ քաղաք-
ներում» ասեցին:— «Եթէ այդպէս է, լաւ է, որ
լրագրիւններ ստանաք»:— «Լրագրի կուզենք ըս-
տանալ, բայց թանկ է, իսկ մենք հաղիւ կարո-
ղանում ենք եւ օթը վարժապետ պահել, ամեն
մէկին տասը ոսկի (հարկեր բուք) տալով տարե-
կան»:— «Ի՞նչպէս, այստեղ բնածնակութիւն էք
անում, իսկ այստեղ եւ օթը վարժապետ պահում,
բայց որտեղից էք տալիս այդ ոսկիները»:—
«Քիւրդեր, մեր օրվայ աշխատանքի ամեն մէկը
մեզնից տարեկան տուրք է տալիս, որ ուղար-
կում ենք վարժապետների համար»:— «Լա՛ւ,
միթէ՛ ձեզնից լրագրիւններ փող կուզեն»:— «Ե-
ֆէնդի, կուզեն»: Եւ մէկ շաբաթ է որ մեր
երկրացի մի քանիսն այժմուր ենք գցել Մա-
սիսի մօտ, որ փոխանակ 13 մէջիկէ առնելու,
մեզնից 10 մէջիկէ առնել տարեկան, որովհետեւ
10 մէջիկէ էլ երկուսը պ. Աբ. Ուսանէ և
խոստացել տալու, բայց Մասիսի խմբագիրը

չէ համաձայնում, իսկ մենք էլ նորա ուղած
դրամը չենք կարող տալ:— «Ո՞վ պատուակաւ
և ազնիւ Մասիս, բացակայեցիք մտքիս մէջ,
մինչև սրտիս խորքը յուզվելով այսպիսի յուզիչ
տեսարանից, որը ներկայացնում էին գիրք
մուրացող խեղճ մարդիկ, որոնց սակայն այդ
էլ մերժում են Կ. Պոլիսի ճառարան «ազգասէր-
ները»:— «Լա՛ւ, ասեցի, ես կը գրեմ ձեր մասին
ուստաւայելի, որ նոքա ձեզ համար գրքեր էլ
և լրագրիւններ էլ ձեր ուղարկեն»:— «Ո՞, էֆէնդի,
սաղ պահենք, քեզ համար միշտ Աստուծուն
կաղօթենք, եթէ մի այդպիսի լաւութիւն անէք»
ամեն կողմից ձայնակցեցին ուրախալից ձայնով:
«Ի՛նչ էք մեղաւոր, որ մինչև հիմայ չէք ասել
ինձ համար, այլ մի այնպիսի պարտաւորութիւն,
որը եթէ մոռանամ, իմ ուստաւայ բարեկամե-
րըս էլ ինձ իրանց մէջ էլին ընդունի» ասեցի
յարմարվելով նոցա զարգացման աստիճանին:
Իրանց հեռաւոր եղբայրների այսպիսի հայրե-
նասիրութիւնից, խեղճերից մի երկուսի աչքին
արտասուք ցայտեց: Մի վայրկեան տրեց մի
տրիպագաւ լուծութիւն, որը հաղիւ կարողանալով
ընդհատել, սկսեցի աւելի ևս քաջալերել թէ
իրանց այդպիսի աշխատքի համար ուստաւա-
յերը այնչափ ուրախ կը լինեն, որ դուք փո-
ղով էլ օգնութիւն անեն իրանց: «Ո՞չ, ոչ, էֆէն-
դի, այդ կողմից մենք ոչ ոքին չենք ուզեցնայ
բեռ լինել, փառք Աստուծոյ մենք առողջ մար-
դիկ ենք, մենք կաշխատենք և մեր աշխատան-
քով կը կատարենք մեր ազգային պարտքը»:

Այս բանակցութիւնների ժամանակ ամբողջ
տունը, որի մէջ ես ընկալութիւն ունեմ, ժողով-
ված է եղել նախասանկաւոր լսելու համար թէ
այս ինչ երկար զրոյց է, որ շարունակվում է
մի խումբ բնածնակիւնների հետ, Հասկանալով
այցելուների սրտաշարժ պատգամաւորութեան
նպատակը, տան տիրոջ երկու օրիորդները, որ
հայ-կաթոլիկ են, ուրախութիւնից յուզված ձիւ
բարձրացրին տան մէջ իրանց դատաւրբերը որո-
նելով դէս և դէն հայաստանի բնածնակիւններին
նուիրելու համար: Իսկ ինձ ուրիշ բան չունե-
նալով սեղանի վրա հայերէն, քացի երկու բա-
րեկամներիցս ինձ նուիրած մի «Ձայն հրազա-
րակախութիւն» և մի «Սոխակ Հայաստանի», վեր
առաջ երկուսն էլ տուեցին նոցա, աւելացնելով
նոյնպէս և մի հատ «Գամառ-Քաթիպայի» նոր
տպագրութիւնը, որը այդ օր նոր էի փոխ առել
իմ բարեկամ զօկ. Փնէթիմալեանից: Խեղճերը
շնչոված այնչափ մի մեծ ուրախութիւնից, սուրբ
մատուցների պէս փաթաթեցին բոլոր գրքերը
թաղկանակներին մէջ ու հարկեր բերան աղօթք
անելով, դուրս գնացին, խոստանալով նախ այդ
գրքերը կարգաւ իրանց այստեղի ժողովներում,
իսկ յետոյ ուղարկել հայրենիք իրանց վարժա-
պետներին հեռու երկրից եկած այդ սուրբ պատ-
գամներին քիւրդերին ևս մասնակից անելու հա-
մար:

Ահա այսպիսի մի պատգամաւորութեան կող-
մից է, որ այնչափ հաճելի պարտաւորութիւն
եմ համարում ինձ համար դիմել բոլոր բարեկա-
նայ խմբագրիւններին և հեղինակներին, որ նոքա
չը զանաւ իրանց մտքի արդիւնքները նուիրել
այն մարդիկներին, որոնք Հայաստանի ծոցում
ինքնաբերաբար ձեռնարկած են այն գործին, որը
մի փոքրիկ կոհակից գոյացած անհուն շարժման
ալիքների կարող է փոխվել, եթէ պ. պ. Սմբատ
Շահ-Աղիլ, Բաֆֆի, Գամառ-Քաթիպայ, Աւագ-
Ղարեան, Պոռնիանց, Աղայանց, Բարիու-
ղարեանց և ուրիշները բարեհաճեն իրանց հեղի-
նակած կամ հրատարակած աշխատութիւնների
գոնէ մի մի օրինակը նուիրել. ուղարկելով նո-
ցա Կ. Պոլիս ուստական փոստով Յարութիւն
Համբարեանին անունով Poste restante վերնադ-
րով: Այստեղ ստանալով այդ գրքերը, նոքա կը
կարդացվին համայնաւ իրանց մէջ, համ էլ
մեծ պրօպագանդա կարող էին անել Հայաստա-
նի խորքում: Եւ ասում եմ, ուղարկել մի մի օ-
րինակ, աչքի առաջ ունենալով հեղինակների
և հրատարակիչների առանց այն էլ արած մեծ
անձնական զոհաբերութիւնները, բայց եթէ մի
բարի մարդ դուրս գար, որը իր հաշւով տասը
տասը հատ լսեցիք, «Գամառ-Քաթիպայ», «Ձայն
հրազարակախութիւն» և «Սոխակ» երգարանը նուի-
րէր, ու ինչ մեծ բարութիւն արած կը լինէր իր
հեռաւոր հայ եղբայրներին: Իսկ գալով հայ
խմբագրիւններին, քաջայայտ եմ, որ ոչ «Մեղու-
կան» և «Պատկեր» և ոչ «Բժշկական
թերթ» մի վայրկեան անգամ կը տատանվեն ի-

րանց թերթերը ուղարկել նոյն վերոյիշեալ հա-
ցեով, ինչպէս որ հաւաստի եմ, որ դուք էլ
«Մշակ» մի ձրի բաժանորդութիւն ևս կը շտա-
պէք աւելացնել այն ցուցակի մէջ, ուր այդպի-
սի բաժանորդագրութեանց թիւը վաղուց արդէն
հարիւրից անցած պիտի լինի: Այս մասին թող
կանխաւ ընդունեն իրանց մօտ միջնորդողի ջերմ
շնորհակալիքը այն ամենքը, որոնք ուշադիր կը
լինեն այսչափ բարի գործին: Նմանապէս կը յի-
շեցնենք մեր բարեկամ Յովակիմ Գեղամանցին,
որ նա ևս չը մոռանայ իր «Ձենեակ-դէնեակ»
գրվածի մասին, որ մեծ հրահանգիչ ազդեցու-
թիւն կարող է ունենալ Հայաստանում նորան
ընթերցող գիւղական հասարակութեան վրա:
Ել հարկաւոր է արդեօք ասել թէ պ. Տէր-Ղեռ-
դեանցի «Մայրենի լեզուն» որչափ կարեւոր է այս
պարագայում: Գրքերը և լրագրիւնները ուղար-
կողների անունները պարտաւորութիւն կը հա-
մարեմ իր ժամանակին յիշել «Մշակ» մէջ:

Գրեգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Փարիզի լրագրիւնների խօսքերով, կայսրու-
թեան անկումից յետոյ Ֆրանսիայում տատնեք
առաջին մինիստրներ են եղել, ութը արտաքին
գործերի մինիստրներ և քսան ու մէկ ներքին
գործերի մինիստր: Գամբետտան մինիստրների
խորհրդի տաան և չորրորդ նախագահն է և ար-
տաքին գործերի ինքնորոշ մինիստր: Արտա-
քին գործերի ամենաերկարատե կառավարիչը
դուքս Դէկազն էր, որը այդ պաշտօնի մէջ չորս
տարի մնաց:

— «Temps» լրագրին Կ. Պոլիսից հաղորդում
են, որ Բ. Գուռը յունական կառավարութեանը
դիմեց մէկ շրջաբերականով, որով պահանջում է
թիւրքիայի մէջ եղած փոստատուներն այնպազ
փակում: Եթէ նշանակված ժամանակից երեք
օր անցած Գուռատանը չի կատարի այդ պա-
հանջը, այն ժամանակ թիւրքաց կառավարու-
թիւնը սպառնում է ուժով փակել նրանց այն-
պէս, ինչպէս որ Գուռատանը վարվեց թիւրքաց
փոստատան հետ Լարիսում:

— Ֆրանսիական լրագրիւնները հաղորդում են,
որ Բերլինի ֆրանսիական դեսպան Սէն վալէրի
հրաժարականը իր պաշտօնից կարելի է վերադի-
րել այն բանին, որ ինքն իր կղերական համոզ-
մունքների պատճառով կարելի չը համարեց ծա-
ռայել մէկ այնպիսի կառավարութեան մէջ, որը
յայտնի հակակղերական բնաւորութիւն ունի:

— «KABKAZ» լրագրում կարդում ենք, «Մէկ-
կայից ստացված վերջին լուրերի հիման վրա,
այնտեղ իւրաքանչիւր օր ժամատախից մինչև
300 մարդ են մոռնում: Շոգեխաւերի տէրերը
հրաժարվում են ուխտաւորներին սրբազան քա-
ղաքից վերադառնալու»:

«ՄՇԱԿ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳՍՏԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 18 նոյեմբերի: Պաշտօնական
հեռագիրը հերքում է երգրումի շրջակա-
ներում ժանտախտի երևալու լուրը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 նոյեմբերի: Հրա-
մայված է Պետիգորսկի շրջանը երկու բա-
ժին անել: Պետիգորսկի և Նալչիսկի
«Прав. Вѣстн.» լրագիրը հայտարարում է.
Բարձրագոյն հրամայած է. նահանգական
պաշտօնական թերթերը ազատել ցենզու-
րայից և հրատարակել նահանգապետների
պատասխանատուութեամբ: Գաւառական մաս-
նաւոր թերթիւրը ենթարկվում են փոխ-նա-
հանգապետի ցենզուրային այն տեղերում,
որտեղ ցենզուրներ չը կան: Նոյեմբերի 17-ին
բաց դռներով սկսվեցաւ Շերվաշիձէի դա-
տաստանական գործի քննութիւնը: Գատա-
րանի մէջ եղած հասարակութիւնը բացա-
ռապէս գիւղաւորական դասից է: Կարգացվե-
ցաւ մեղադրական ակտը: Մեղադրվածը ի-
րան մեղաւոր խոստովանեց, բայց մի նոյն
ժամանակ ստիպված պատժել քննադատնե-
րի յանդգնութիւնը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արտասահմանից եկած մի վարպետ շինում է պատրաստ և զարդով ընդունում է էփան ու լաւ քան թէ ուրիշներ, կենդանակերպ ծաղիկներով զանազան տեսակ գերեզմանական արձաններ, չափաբար, շիրաճխանայի վերի ծայրը, ապտէկայի կարգը № 32 խանութը:

8—15

Երաժշտական խանութում, որ գտնվում է Արծրունու գալլերէայում, բնութաբանի մօտ, երաժշտական իրերով առուտուրը շուտով կը ծառայուի պատճառով, այս նոյններին 6-ից սկսած վաճառվում են սաստիկ արժան գներով նոտեր, երաժշտական գործիքներ, ջութակներ, Ֆլեյտաներ, կըլարնէտներ, վիոլոնչէներ, դիրաբներ և այլ երաժշտութեան վերաբերյալ իրեր բոլորով մինչև 80 ԿՕՊԷԿ ԶԻՋՈՒՄՈՎ:

7—10

ԲԱԹՈՒՄԻ

ԿՕՄԻՍԻՕՆԵՐ

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապապարանք:

15—20

ԹԷՅ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 Կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 Կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ ԹԻՖԼԻՍՈՒՄ, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ: Բացի այդ Անգլիական խանութը կը ընդունէ ՄԱՔՈՒՐ թէյ առանց թղթի և ԱՐՃՃԻ:

85—100

ՐԷՍՏՈՐԱՆԸ

ԱՐԾՐՈՒՆՈՒԹԱՏՐՈՆԻՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և ԳԵՂԵՅԻ ՏԵՍԲ, ունի ընտիր ձԱՇԵՐ և ԸՆԹՐԻՔՆԵՐ, նոյնպէս և լաւ ԽՄԻՉԲՆԵՐ: Գները շատ էժան են:

14—20

ԻՍՍԻՑ ԵԱԿՕՎԼԵՎԻՉ ԻԼԻԱՇԵՎԻՉ ՄԱԽՈՒՄ Է շատ ձեռնառու գնով 345 քառ. սափ. հող, երկարութեամբ փողոցի վրա 23 սափէն, իսկ լայնութեամբ 15 սափ, կամ այդ հողի մի մասը Բագու-Թիֆլիսեան երկաթուղու կայարանի: Ցանկացողները կարող են տեղեկանալ Իլիաշևիչի մօտ, որ բնակվում է Կովկասի ճանապարհական հաղորդակցութիւնների վարչութեան տան կից, տուն Բարնոյի № 9:

3—3 (2)

Կուկիոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ «Թանգոյեան» ուսումնարանի վարչութիւնը յայտնում է, թէ նոյն դպրոցումը նշանակված է ածուրդ նոյններին 22-ին առաւօտեան 10 ժամին, նոյն եկեղեցւոյ պատկան 12 № կրպակները և սենեակները կապալաւ տալու համար:

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷՓԱՆ քան թէ ուրիշ տեղ. ԹԷՅ, կակաօ, ՇՕԿՈԼԱԿ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բոխիներ, թէյաններ, սուրճահներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուսնալու ամաններ, ԿՈՂՊԷՐՆԵՐ, ԶԳԵՏԱԿԱՆՆԵՐ, գրաւներ, դանակներ, ԳՐԻՉՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիաներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէտկա, ՌԱՄՔԵՐ, սանձեր, ութձոներ, ՄԱՀՃԱՆԱՆՆԵՐ, երեսբիչներ, թաշկինակներ, կանանց գուլարներ, մարդկերանց գուլարներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբետ, ցիտրան մազնեղիա, խինայի գինի, պօրտվէյն, խրիս, կօնիակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ վաճառականներին ՄԵԾ քանակութեամբ ծախվում է ԹԷՅ. պուրքով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտով 1 ր. 1 Կ. 10 Կ., 1 ր. 20 Կ., 1 ր. 40 Կ., 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 20Կ-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., բէլգիկներ 4—34 ր., ԲՈՒԼԴՈԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շէֆլիզի դանակներ 3 ր. 50 Կ. գիւժիկը, ալբոմներ կիսափողով, Ֆիլտրաներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացանների և բէլգիկների թիֆլիսում:

53—100

ՎԵՐԱԿՈՒՆԵՐ 4 ր., ծըծողներ 1 ր., ծալիով աթոռներ 1 ր. 50 Կ., ՓԱՅՏ-ԱԹՈՒՆ 4 ր., ԲԱԶԱԹՈՒՆ-ՄԱՀՃԱԿԱՆ 10 րուբլ. և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 Կ., մի աման ջրոցներ 50 Կ., պատկա ծխողների համար 60 Կ. ֆունտը, անգլիական ՎԱՆԵՆՆԵՐ և այլն ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: 10,000 զոյգ գուլարներ 25 Կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒՎԱՆՆԵՐ 30 Կ.— 1 ր., 7,000 մատուցարաններ 5 Կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱՆՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմպէյ 1 ր.—1 ր. 30 Կ., պարուսինա 40 Կ.—1 ր., 300 հատ բէլգիկներ 4 ր.—35 ր., 700 արած ԿԻՍՍԱԳՆՈՎ, 10,000 ֆունտ թէյ ԹԷՅՄԱՐԱՆՈՎ 1 ր. 65 Կ.: երկաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Ծախվում են ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ:

54—100

Վաճառվում են 15,000 ամաններ տառքին տեսակի 15 Կ. հատը, 12,000 խրուտալի բաժակներ 25 Կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 Կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 Կ. հատը, 10,000 ասեղ 8—40 Կ. հարկերը, 10,000 պենալներ 5 Կ., 5,000 շիշ պօրտվէյն և խեբես 1 ր. հատը, 2,000 արշին կլէտնկա 60 Կ.—2 ր. արշինը, 2,000 գիւժին մատիտներ և զրաւթներ 8 Կ. գիւժինը, 2,000 Փ. հնդկական բրինձ 7, 8 և 10 Կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպտօշկա 50 Կ. ֆունտը, 600 անգլիական բէլգիկներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, գրապ, տրիկօ, ալբոմներ, ձեռնալսող պալտներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ: Նոյն տեղը ծախվում է ծովային ԽՈՏ պուրքը 2 ր. 50 Կ.:

5—60

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը աւրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Կինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱՅՈՎ ուղարկված 2 ր. 49 Կօպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԻՂ, մազերը աւրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխացաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 48—100

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ.

Դասագրքեր	
1. Աղայեանց՝ Ուսումնի մայրենի լեզուի, ա. տ. չորր. տիպ.	20 Կ.
2. Տէր-Գալսեօնի՝ Русское Слово, հինգեր. տիպ.	45 —
3. Կոստանեանց՝ Ծաղկաբաղ շրջան Ա. (գրաբար)	25 —
4. — — — — — շրջան Բ. (նոյնպէս)	60 —
5. — — — — — շրջան Գ. (նոյնպէս)	40 —
6. — — — — — գրաբարի հղովումն	15 —
7. — — — — — գրաբարի խմբահումն	25 —
8. Տէր-Յակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 —
Ընթերցանութեան դրքեր	
1. Աղայեանց՝ Անահիտ, հին գրոյց.	50 —
2. Արս. Զ. Բագրատունի՝ տառն պատգամը	25 —
3. Տէր-Միքայէլեան՝ Թղուկ, թարգ. Դօդէից	50 —
4. Լալայեան՝ Ահմէդի մօպարալը	10 —

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

Մամուլի տակ են՝ Մանդրինեանցի «Նահապետական» և «Կիւցազնական» աշխարհները և Տէր-Վահագնեանի «Մայրենի լեզու» երկրորդ տարին: Շուտով մամուլի տակ կը մտնի՝ Սրբազան պատմութիւն հին կտակարանի Հայրապետ:

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐԵՐԲ

Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԱՎ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԱՍՏԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ	
1. Բագրատունի՝ ճանն պատգամը. զինն է	25 Կ.
2. Աղայեանց՝ Անահիտ, հին գրոյց.	50 —
3. Թղուկ, թարգ. Տէր-Միքայէլեանցի.	30 —
4. Աղբաւ մանուկ կամ բարոյական վէպ.	20 —
5. Խաթաբալա Սուրբուհեանցի.	50 —
6. Չորս մանրակա Տէր-Աւետիսեանի.	20 —
7. Հայերէն լատո երկխոսների համար.	50 —
8. Տէր-Վահագնեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն.	60 —
9. Կոստանեանց՝ Գրաբար բայերի խմբահումը.	25 —
10. Թագուրեան՝ Գործ լեզուաբանական հետազոտութեան.	50 —

Եւս ստացուել է բոստօլի Տէր-Աբրահեանցի 1882 թուի ՕՐԱՅՈՑՅՈՒՆ, զինն է 15 Կօպ. գումարով առնողներին զիջումն կը լինի:

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐԲ

ԹՈՒԱՐԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

Սխտեմատիքական ընթացք հայոց միջնակարգ ուսումնարանների համար: Մասն առաջին (ամբողջ թուական) ԳՐԻԳՈՐ ՎԱՐՁԵԼԵԱՆ, հրատարակութիւն Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ լրագրական գործակալութեան ԳԻՆՆԵ 40 ԿՈՊ. Վաճառվում է բացառապէս Թիֆլիսում՝ Բ. ՇԱՀՎԵՐԴԵԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: Ուսումնարանները և գումարով առնողները ստանում են 20% զիջումն: Օտարաբաղաբացիք պէտք է գիմեն հետեւեալ հասցեով. Въ Тифлисе, газетное Агентство Шавердова. 7—10

ԿԱՐԻ ԵՒ ԶԵԻՒ ուսուցիչ ԳՐԻԳՈՐ Լ ՇՈՒՇԱՆԻԿ ԱՆԵԱՆՑՆԵՐԸ Ախալցխայից վերադառնալով Տիֆլիս՝ կամենում են կանանց և երեխայոց հարուստների ԿԱՐԵԼ Լ ԶԵԻԼ ՍՈՎՈՐԵՅՆԵԼՈՒ համար ԱՐՀԵՏԱՆՈՑ րաց անել, եթէ աշակերտութիւն թիւը 15-ի հասնի: Աշակերտութիւնը կարող են լինել և ՏԻԿԻՆՆԵՐ: Արհեստը կաւանդուի ՄԱՅՐԵՆԻ լեզուով: Սովորելու պայմաններին տեղեկանալ ցանկացողները թող բարեհաճեն դիմել Գ. ԱՆԵԱՆՑԻՆ Կուկիայ, ՄԻՔԱՅԵԼԵԱՆ փողոց տուն № 27 որտեղ ընդունում են ԿԱՆԱՆՑ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ: Անանցները աւելացնում են և այս որ իւրեանց արհեստանոցում սովորած ԱՇԱԿԵՐՏՈՒՆԵՐԸ ամենազատ կերպով կարող են բեմայների ուղարկուի ՎԱՐՁԱՔՆՆՈՒԹԻՒՆ բռնել:

2—3 (2)

ՎԻԵՆԱՅԻ ՄԵԲԷԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում Կառուկիաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում: Օտարաբաղաբացիք կարող են դիմել այս հասցեով. Тифлисе, Михаилу Н. Теръ-Никогосову. 108—150